ձանկինները նոյնպէս սերով նայում են հայելու մէջ և յաճախ հաւաքւում են նրա շուրջը, կարծելով թէ իրենց տեսածն ուրիշ թռչուն է։ Ծեր թութակներն իրանց պատկերը տեսնելիս բոլորովին անտարբեր են մնում. այդ բացատրւում է նրանով, որ նրանք վարժուել են տեսնելուն, ինչպէս և մարդիկ։

Այս բոլորից հետևեալ եզրակացութիւնը կարող ենք հանել։ Միայն այն կենդանիները, որոնց զգայարաններից ամենաշատ զարգացածն է տեսողութիւնը, ընդունակ են հայելու մէջ իրանց պատկերը ճանաչելու և որոշելու. իսկ որոնց ամենագլխաւոր զգայարանը հոտոտելիքն է, այդ ընդունակութիւնից զուրկ են։ Ուստի և նուրբ հոտոտելիք ունեցող կենդանիներին յիմար չպէտք է համարել, որ պատկերների նկատմամբ անտարբեր են մնում։ Այս հանգամանքը շատ անգամ անտես են առնում, ինչպէս արել է երևելի կենդանաբան Ալֆրէդ Բրէմը։



ՊՐԱԴԱՐԱՊԻՐ ՄՏՔԵՐ

Կէսը շատ որ ուռչի, զրօ պիտի դառնայ։

Հայհոյելով ինքդ քեզ ստորացնում ես, առանց ուրիշին լաւացնելու։

Ուղիղ տեսնելը դժուար է. բայց ժամանակին մէկ աչքը փակելն էլ հեշտ չէ։

«Այս ինչն ուղիղ հայեացքների տէր է»—ասել՝ սովորաբար նշանակում է—«իմ հայեացքների տէրը»։

Փոքր ինչ յոռետեսութիւն—բնական բան է։ Չէ՞ որ ամպերն աւելի մօտ են մեզ, քան արեգակը։